ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

Հ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պետա-իրավական երևույթների նկատմամբ արժեքաբանական (աքսիոլոգիական) մոտեցման կարևորությունը և անհրաժեշտությունը ավելի ու ավելի է ընդգծվում իրավաբանական գրականության մեջ[1]։ Ներկայումս առաջացել է այնպիսի իրադրություն, երբ ներկայացուցչական համակարգի գործունեության գրեթե բոլոր կողմերը իրավաբանական տեսակետից ուսումնասիրված են։ Սակայն պառլամենտի և ներկայացուցչական մյուս մարմինների կառուցվածքային-ֆունկցիոնալ հիմնահարցերն անհրաժեշտ է իմաստավորել ոչ միայն պետա-իրավական գիտություններից, այլև սոցիոլոգիայի, հոգեբանության, արժեքաբանության, ինֆորմատիկայի տեսանկյունից։ Դա հնարավորություն է տալիս մշակել և առաջարկել մեր երիտասարդ պետության մեջ պառլամենտի և պառլամենտարիզմի զարգացմանը նոր խթան հաղորդելու ունակ ինքնատիպ տեսական կառուցվածքներ։ Ե՛վ մեզանում, և՛ արտասահմանում փիլիսոփայական գրականության մեջ նշվում է իրավաբանական գիտության մեջ արժեքների տեսության զգալի դերը։

Նախ և առաջ անդրադառնանք պառլամենտի և պառլամենտարիզմի արժեքային բնույթին։ Դրանք, որպես սոցիալ-քաղաքական ինստիտուտների ամբողջություն, ունեն սոցիալական արժեք։

Պառլամենտը և ներկայացուցչական մարմինները ընդհանուր առմամբ իրենց առջև դնում են այնպիսի նպատակներ, որոնք անհրաժեշտ, օգտակար են հասարակության, նրա համակողմանի զարգացման և առաջադիմության համար։ Այդ համակարգի արժեքային բնույթի մասին կարելի է դատել այն բանով, թե այն

ա) ինչպիսի նպատակներ է ձևակերպում և իրականացնում

բ) ի՞նչ մեթոդներ է օգտագործում

գ) ի՞նչ հարցերի վրա է բևեռում իր ուշադրությունը

դ) ինչպե՞ս է ապահովում իշխանությունների տարանջատման, պառլամենտարիզմի, դեմոկրատիզմի, օրինականության սկզբունքները և այլն։ Ամենաընդհանուր գծերով այսպիսիք են պառլամենտի, տեղական ինքնակառավարման և պետության մյուս մարմինների սոցիալական արժեքի չափանիշները։ Դժվար չէ տեսնել, որ դրանց արժեքաբանական ուսումնասիրությունը թույլ է տալիս առավել խորությամբ ներթափանցել ներկայացուցչական համակարգի էության մեջ, վերլուծել իրատեսական գնահատականներով։

Ներկայացուցչական համակարգի առաջնահիմքը հասարակության սոցիալ-քաղաքական և տնտեսական շահերի բազմազանությունն է։ Հենց դա է պայմանավորում պառլամենտի և ինքնակառավարման մարմինների էությունը, ներկայացնում դրանց արժեքային բնույթը կայունացնող գործոնները։

ՀՀ պառլամենտի՝ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների արժեքաբանական բնույթը պայմանավորում է դրանց պատաս-

---

[1] С. С. Алексеев, Социальная ценность права в обществе, М., 1971; «Аксиологические проблемы правоведения», М., 1974; Ю. А. Демидов, Социальная ценность и оценка в уголовном праве, М., 1975, и др.

խանատվությունը հասարակության սոցիալական արժեքների պահպանության համար։ Այդ պատասխանատվության գիտակցումը նշված արժեքների դեմ ոտնձգությունները կանխելու և դրանց նսեմացման դեպքերը վճռականորեն դատապարտելու պայմանների ստեղծման ելակետն է։ Ներկայացուցչական մարմինների արժեքային բնույթը դրսևորվում է, օրինակ, ՀՀ 1995 թ. Սահմանադրության պրեամբուլայում և 8-րդ հոդվածի վերլուծության մեջ։ Այդ առնչությամբ հատուկ նշանակություն ունեն ինքնիշխան պետականության վերականգնման և զարգացման, սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության, քաղաքացիական համաձայնության ապահովման, համամարդկային արժեքներին հավատարմության մասին մատնանշումները։ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածում ամրագրված են սեփականության իրավունքը, սեփականության ձևերի բազմազանությունը. «Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը։ Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը»։ Դժվար չէ նկատել, որ վերը նշված սահմանադրական դրույթները բովանդակում են «շահեր» կատեգորիան, որը արժեքաբանական կատեգորիա է, քանի որ արտացոլում է պետական մարմինների կողմից բավարարման ենթակա սոցիալական պահանջմունքները։ Այդ մարմինների սոցիալական արժեքը այնքանով է բարձր, որքանով դրանք այդ պահանջմունքները առավել լրիվ են բավարարում։ Վերլուծված սահմանադրական դրույթները նպատակամղում են արժեքների ճանաչողությանը։ Հնարավոր չէ լիովին իմաստավորել շահերը՝ առանց արժեքաբանական մոտեցումների։ Իսկ դա իր հերթին ենթադրում է.

ա) հասարակական գիտությունների կողմից արժեքաբանական հիմնահարցի տեսական մշակվածություն

բ) սոցիալական արժեքների հայտնաբերման մեթոդիկայի օգտագործում։

Ներկայացուցչական համակարգի արժեքաբանական բնութագրման համար հիմնականն ու գլխավորը սուբստանցիոնալ արժեքների հարցն է։ Այդ արժեքների մեջ պետք է մարմնավորվեն մեր նորացող հասարակության հիմնական սկզբունքները։ Դրանք նախ և առաջ այնպիսի արժեքներ են, ինչպիսիք են, օրինակ, ժողովրդավարությունը, ազատությունը, հավասարությունը, հումանիզմը, արդարացիությունը, պատասխանատվությունը, իրավակարգը, օրինականությունը։

Ներկայացուցչական մարմինների մասին օրենսդրության արժեքաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ մարմինները ունեն ևս երկու տեսակի արժեքներ՝ ֆունկցիոնալ և կազմակերպական-քաղաքական։ Առաջինի թվին են դասվում այն արժեքները, որոնք կողմնորոշում են դեպի իրացման ենթակա հիմնական նպատակները, խնդիրները և իրավասությունը, իսկ երկրորդին՝ այն արժեքները, որոնք արտացոլում են այդ մարմինների աշխատանքի հիմնական սկզբունքները, ձևերը և մեթոդները։ Ներկայացուցչական համակարգի առումով արժեքների երեք տեսակների հարաբերակցության վերլուծությունը թույլ կտա առաջադրել և լուծել արժեքաբանական մի շարք հիմնահարցեր։

Այնքան էլ դժվար չէ հավաստել սուբստանցիոնալ, ֆունկցիոնալ և կազմակերպական արժեքների գոյության փաստը։ Ավելի կարևոր է գտնել ներկայացուցչական հաստատությունների մասին օրենսդրության մեջ դրանց մարմնավորման չափանիշները։ Չէ՞ որ առանց արժեքաբանական մոտեցման դժվար է խոսել արժեքները օրենսդրությամբ լրիվ ընդգրկելու մասին, իսկ դրա համար անհրաժեշտ են հուսալի չափանիշներ։ Հասարակական հարաբերությունների դյուրաշարժությունը պայմանավորում է սոցիալական արժեքների բուն համակարգի շարժունակությունը, չնայած վերջինիս որոշակի կայունությունն անխուսափելի է։ Գիտության առջև ծառայած է արժեքների

համակարգի փոփոխության վրա ներազդող գործոնների իմացության ոչ դյուրին խնդիրը։

Ներկայացուցչական համակարգի արժեքաբանական բնութագիրը կարելի է տալ նաև դրա՝ որպես զանազան սոցիալական գնահատումների սուբյեկտի վերլուծության տեսակետից։ Պառլամենտի սահմանադրական կարգավիճակը պայմանավորում է նրան վերապահված իրավունքների և նրա վրա գրված պարտականությունների շրջանակներում բոլոր սոցիալական արժեքների բարձրագույն պետա-իրավական գնահատակնի իրավունքը։ Սակայն, որպես սոցիալական գնահատումների սուբյեկտներ, ներկայացուցչական մարմինները կոչված են մարմնավորելու իրենց իսկ ընտրողների գնահատականները, որոնք մի շարք դեպքերում վերջնական գնահատականներ են։ Այստեղից կարելի է եզրակացություն անել սոցիալական գնահատականների ինքնավար և ինքնիշխան սուբյեկտների մասին։ Եթե առաջիններին վերաբերում են ներկայացուցչական մարմինները, ապա երկրորդներին՝ ընտրողները։

Իրացնելով իրենց գործառնությունները, իշխանության ներկայացուցչական մարմինները միաժամանակ հանդես են գալիս որպես սոցիալական գնահատումների սուբյեկտ և օբյեկտ։ Այսպես, որոշում ընդունելով ներկայացուցչական մարմինը տալիս է կոնկրետ կենսական իրադրությունների և դրանց վրա ներգործելու տարբերակների գնահատականը։ Միևնույն ժամանակ, այդ մարմինը գնահատումների է ենթարկվում հասարակական հարաբերությունների այլ սուբյեկտների՝ կառավարչական մարմինների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից։ Սոցիալապես նշանակալի գրեթե յուրաքանչյուր որոշում փաստորեն այն ընդունած մարմնի՝ արժեքաբանական հարաբերությունների մեջ մտնելու ակտ է։

Գնահատման սուբյեկտների զարգացումը նպաստում է մի կողմից դրանց արժեքային բնույթի ուժեղացմանը, իսկ մյուս կողմից՝ այդ բնույթի բացահայտմանը։ Եթե պետական իշխանության մարմինների գնահատման օբյեկտը սահմանափակված է իրավասության հարցերի շրջանակով, ապա ընտրողների գնահատման օբյեկտը ըստ էության սահմանափակված է լոկ նրանց կողմից գնահատվելիք երևույթների և գործընթացների գիտակցման ծավալով և մակարդակով։ Գնահատումների նշանակությունը աճում է, երբ դրանք հրապարակվում են համընդհանուր տեղեկության համար։

Արժեքային հարաբերությունները հանգույցն են այն հիմնական հասարակական հարաբերությունների, որոնք առաջանում են՝ նախ արժեքների արտահայտման և արտացոլման, և երկրորդ, դրանց ընդունման ու պահպանման առթիվ։ Նշված հարաբերություններում շաղկապվում են քաղաքական, գաղափարաբանական, բարոյական, իրավական և մի շարք այլ հարաբերություններ։ Հենց արժեքային հարաբերությունների մեջ է կենտրոնացվում և ի հայտ գալիս դրանց սոցիալական նշանակալիությունը։

Ներկայացուցչական մարմինների գործունեության ոլորտում արժեքային հարաբերությունների սուբյեկտ են առաջին հերթին ընտրողները, պատգամավորները, պառլամենտը և տեղական ինքնակառավարման մարմինները։ Իսկ ինչպիսի՞ն է քննարկվող սուբյեկտների արժեքաբանական դերը և արժեքաբանական վարքագիծը։

Նախ, ամեն մի քիչ թե շատ նշանակալի ընտրական կորպուս նախապատվություն է տալիս արժեքների որոշակի համակարգի, որը պայմանավորվում է տվյալ վարչատարածքային միավորումում կամ տարածաշրջանում մշակույթի և ժողովրդավարության զարգացածության, բարոյականության և ավանդույթների մակարդակով, իրավակարգի և օրինականության վիճակով։ Այսպիսով, արժեքների ձևավորման մեջ ոչ նվազ կարևոր դեր է խաղում ինքը՝ իշխանության ներկայացուցչական մարմինը. որը ներգործում է գրեթե բոլոր գործոնների վրա։

Թվարկված և մի շարք այլ գործոնների փոխգործողության հետևանքով ընտրողների մեջ առաջանում է համապատասխան արժեքային վերաբերմունք։ Սակայն արժեքաբանական տեսանկյունից փոխգործողության մե-

խանիզմը հետազոտված չէ։ Պետականագիտությունը առայժմ քիչ է զգացնել տալիս ընտրողների կորպուսի այն սոցիալական պահանջմունքների համակարգի և կառուցվածքի մասին օբյեկտիվ տվյալների հարցում, որոնց բավարարումը պետք է ապահովվի պատգամավորների և ներկայացուցչական մարմինների կողմից։

Այս կամ այն սոցիալական արժեքներին ընտրողների կողմնորոշումը ունի որոշակի օբյեկտիվ պայմանավորվածություն։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է այն դրդապատճառների վերլուծությունը, որոնցով դեկավարվում են ընտրողները՝ նախապատվություն տալով համապատասխան արժեքներին։ Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս գիտական ինֆորմացիա ստանալու արժեքների այն համակարգի մասին, որին հակված են ընտրողները։ Այդ արժեքները տվյալ համակարգի մեջ մտցնելը կախված է մեր հասարակության սոցիալական արժեքների արժեքաբանական ընդգրկումից։

Ոչ ոք չի կարող ժխտել այն փաստը, որ սահմանադրական (պետական) իրավունքի գիտությունը չի ուսումնասիրել ընտրական կորպուսի կառուցվածքը, ընտրողի անձը։ Գիտությունը չի կարող տալ ժամանակակից ընտրողի մոդելի պատասխանը տարածաշրջանային, ազգային, պրոֆեսիոնալ, սեռատարիքային հատկանիշների առումով։ Այդպիսի մոդելը կարող էր ճանաչելի լինել այն դեպքում, եթե կիրառվի արժեքաբանական մոտեցում։ Չէ՞ որ խիստ կարևոր է իմանալ, թե յուրաքանչյուր ընտրող առանձին վերցրած և ամբողջ ընտրական կորպուսը ինչպես են բնութագրում պառլամենտի և տեղական ներկայացուցչական մարմնի արժեքը, որչափով է պատգամավորը մտնում ընտրողի սոցիալական շրջապատի ոլորտի մեջ, ինչպիսին է ընտրողների հետ պատգամավորների հաղորդակցման աստիճանը։ Եթե պարզվի, որ պատգամավորը, որպես պետական դեմք, ընտրողի համար իրենից որոշակի հետաքրքրություն չի ներկայացնում կամ այդ հետաքրքրությունների շրջանակը սահմանափակ է և դուրս չի գալիս կոմունալ հարցերի շրջանակներից, ապա կարելի է համապատասխան եզրակացություններ անել ընտրողների և պատգամավորների միջև արժեքային հարաբերությունների բովանդակության և բնույթի մասին։ Ընտրողի համար պատգամավորի սոցիալական արժեքը կարող է չափվել նրանց փոխգործողության ինտենսիվությամբ։ Դա պատգամավորի արժեքային կողմնորոշման թերևս ամենակարևոր ցուցանիշն է։ Իհարկե, այն հարցերի շրջանակը, որոնցով ընտրողը կարող է և պետք է դիմի պատգամավորին կամ ներկայացուցչական մարմնին, պայմանավորվում է դրանց պետա-իրավական կարգավիճակով։ Հետազոտողի խնդիրը այդ շրջանակը ճշգրտորեն որոշելն է և այն դեպքերն ի հայտ բերելը, երբ ընտրողին նպատակահարմար էր դիմել, օրինակ, պատգամավորին, սակայն չի արել։ Նման իրադրություններում կարևոր է իմանալ ընտրողի վարքագծի դրդապատճառները։

Վարքագծի բուն դրդապատճառը ձևավորվում է պատգամավորների հետ հաղորդակցման՝ ընտրական կորպուսի կուտակած փորձի հիման վրա։ Եթե այդ փորձի մեջ դրական գնահատականների համեմատ բացասական գնահատականները գերակշռում են, ապա կարելի է պնդել, որ ընտրողը կկառավարվի այն դրդապատճառով, որը գերակայում է հասարակական գիտակցության մեջ։

Այսպիսով, կարող է ձևավորվել անցանկալի քաղաքական ավանդույթ, որը խստորեն կսահմանափակի ընտրողների և պատգամավորների միջև արժեքային հարաբերությունների ծավալը, բովանդակությունը և բնույթը։

Երկրորդ, կարևոր է պատգամավորների նկատմամբ ընտրողների արժեքային պատկերացումը հասկանալը։ Ներկայումս մենք չունենք այնպիսի գիտական հետազոտություններ, որոնց հիման վրա կարելի լիներ այս կամ այն հավաստիությամբ պարզել, թե պատգամավորական ինչ արժեքներ կան ընտրողների սոցիալական շահերը բավարարելու համար։ Պատգամավորի դերը, որպես արժեքային հարաբերությունների սուբյեկտի, դեռևս ուսում-

նասիրված չէ, թեև այդ հիմնահարցի առանձին կողմեր այս կամ այն չափով ընդունվում են իրավաբանական գիտության կողմից։

Պատգամավորների առնչությամբ առաջանում է այնպիսի արժեքաբանական հիմնահարցերի մի ամբողջ շարք, որոնց լուծումը թույլ կտար ավելի լավ հասկանալու պատգամավորի դերը արժեքային հարաբերություններում։ Եվ իսկապես ինչպիսի՞ն է պատգամավորի արժեքաբանական բնութագիրը։ Հազիվ թե հարկ կա տարակուսելու, որ Ազգային ժողովի պատգամավորներն ունեն արժեքաբանական տարբեր բնութագրեր։ Այդ մասին, հավանաբար, ավելի հիմնավորվածությամբ կարելի է խոսել տարբեր մակարդակների ներկայացուցչական մարմինների անդամների վերաբերմամբ։

Ընտրական կորպուսի համակարգի նկատմամբ պատգամավորների վերաբերմունքը պարզելը հնարավոր է իրենց՝ ընտրողների արժեքային համակարգի և պատգամավորի արժեքային համակարգի համեմատության հիման վրա։ Մինչև հիմա սահմանադրական (պետական) իրավունքի գիտությունը չունի համադրված ինֆորմացիա։ Ենթադրվում է, որ պատգամավորների և ընտրողների արժեքային համակարգը համանման չէ։ Բայց տվյալ ենթադրությունը փաստական ստուգման է ենթակա ծանրակշիռ արժեքաբանական վերլուծության հիման վրա։

Երրորդ, ներկայացուցչական համակարգի կողմից ընդունվող և իրացվող արժեքային համակարգի նկատմամբ պատգամավորների վերաբերմունքի վերլուծության գործընթացում առաջանում են բազմաթիվ հարցեր։ Եթե նկատի առնվի, որ նշված համակարգը արտացոլում է բոլոր կամ զրեթե բոլոր սոցիալական արժեքները, ապա պատգամավորի համար հրատապ է դառնում դրանց գիտակցումը։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ուսումնասիրել առանձին վերցրած յուրաքանչյուր պատգամավորի և միասին վերցրած՝ բոլոր պատգամավորների կողմից այդ արժեքների իմաստավորման կարողունակությունը։ Պակաս կարևոր չէ սոցիալական արժեքների նկատմամբ ներկայացուցչական մարմինների վերաբերմունքի առթիվ պատգամավորների բավարարվածության վերլուծությունը։

Դրա հետ մեկտեղ կարևոր է իմանալ, թե ներկայացուցչական մարմնի աշխատանքում ինչն է հետաքրքրում ընտրողին, ինչպիսի հարցերի նկատմամբ է ակտիվություն դրսևորում նշված մարմնին իր դիտողություններով և առաջարկություններով դիմելիս, ներգրավվելով նրա նորմատիվ ակտերի նախագծերի քննարկման գործընթացին, արտահայտելով համաձայնություն կամ անհամաձայնություն նրա այս կամ այն որոշման կամ գործողության կապակցությամբ։

Ներկայումս սահմանադրական իրավունքը չի կարող տալ արժեքաբանական մի շարք այնպիսի հարցերի պատասխանը, որոնք սկզբունքային նշանակություն ունեն տեսության և պրակտիկայի համար։ Օրինակ, ներկայացուցչական մարմինների իրավասության մեջ մտնող ո՞ր հարցերն են գրավում ընտրողների ուշադրությունը և ինչո՞ւ։ Ի՞նչ բնույթի հարցեր են (քաղաքական, տնտեսական, կոմունալ, մշակութային և այլն) իրենցից արժեք ներկայացնում ընտրողների համար և ինչո՞ւ։ Կարելի՞ է ենթադրել, թե այդ հարցերի լուծման գործում որքան ավելի մեծ կարողություն դրսևորեն ներկայացուցչական հաստատությունները, այնքան ավելի մեծ արժեք կներկայացնեն։

Այս տեսակետից վերլուծելով տվյալ հիմնահարցը, կարելի է հարուստ ինֆորմացիա ստանալ ներկայացուցչական համակարգի գործունեության արդյունավետության գնահատման մասին։ Որոշակի պայմաններում տվյալ գնահատականը կարելի է դիտել որպես համապատասխան ներկայացուցչական հաստատությունների արժեքի հասարակական բնութագրում։ Տարբեր գնահատականների կիրառումը լիովին հիմնավորված է, քանի որ այդ հաստատություններից ոչ բոլորն են միատեսակ արդյունավետ գործում։ Այդ պատճառով էլ չի կարելի երաշխավորել միայն դրական բնութագիրը, մի բան, որը չէր համապատասխանի իրականությանը։

ПРЕДСТАВИТЕЛЬНАЯ СИСТЕМА КАК ОБЪЕКТ АКСИОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА

Г. М. ХАЧАТРЯН

Резюме

Важность и необходимость аксиологического подхода к государственно-правовым явлениям все более подчеркивается в юридической науке.

В настоящее время сложилась такая ситуация, когда почти все аспекты функционирования представительной системы с юридической точки зрения изучены. Многие структурно-функциональные проблемы парламента и других представительных органов уже недостаточно анализировать только с помощью категорий государствоведческих наук. Сейчас их необходимо осмысливать также с точки зрения социологии, психологии, аксиологии, информатики. Это дает возможность разработать и предложить оригинальные теоретические конструкции, могущие сообщить новый импульс развитию парламента и парламентаризма в нашем молодом государстве.

Прежде всего о ценностной природе парламента и парламентаризма. Они как комплекс социально-политических институтов обладают социальной ценностью. Парламент и другие представительные органы государства в целом ставят перед собой цели, которые полезны для его всестороннего развития и прогресса.

Нетрудно видеть, что их аксиологическое изучение позволяет глубже проникнуть в сущность представительной системы, оперировать реалистическими оценками.

Первоосновой представительной системы служат многообразие социально-политических и экономических интересов общества. Именно они обуславливают сущность парламента и органов местного самоуправления и представляют собой факторы, стабилизирующие их ценностную природу.

Аксиологическая природа нашего парламента—Национального Собрания и местных органов самоуправления обуславливает их ответственность за охрану социальных ценностей в обществе.